

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԿՂԱՐՋՔԻ ՃՅՈՒՂԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Լիանա Նազարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Բագրատունիների Տայք-Կղարջքի ճյուղը հիմնվել էր VIII դ. վերջին երեսնամյակում: Այն հիմնել էին Հայոց իշխան Աշոտ Կույր Բագրատունու որդի Վասակն ու սրա որդի Ատրներսեհը: Վերջինիս որդի Աշոտ կուրապաղատի իշխանության օրոք հիմք դրվեց Բագրատունիների վրացական իշխանությանը: Դրանից հետո գերագույն իշխանության համար պայքարում Բագրատունիների Տայք-Կղարջքյան ճյուղը տրոհվեց երկու մասերի՝ Տայքի և Կղարջքի: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդներ: Վերլուծություն. Աշխատանքում քննվել են տոհմաճյուղի տրոհման պատճառներն ու ընթացքը, Աշոտ կուրապաղատից հետո իշխանության բաժանումը նրա որդիների ու թոռների միջև: Արդյունքներ. Աշխատանքում ներկայացվում են գերագույն իշխանության համար պայքարի մասնակիցները, և անդրադարձ է կատարվում Աշոտ կուրապաղատի ժառանգների տիրույթներին: Նրանց պայքարի արդյունքում Բագրատունիների վրացական ճյուղը բաժանվեց երկու մասի՝ Տայքի ու Կղարջքի: Սրանցից Տայքի ճյուղի ներկայացուցիչները ձեռք բերեցին թագավորի ու կուրապաղատի, իսկ Կղարջքինը՝ էրիսթավների էրիսթավ տիտղոսները:

Բանալի բառեր՝ *Բագրատունիներ, Կղարջք, Տայք, Աշոտ կուրապաղատ, Ատրներսեհ, Բագրատ, Գուարամ, Սմբատ պատմիչ, «Վրաց Տարեգիրք»:*

Ինչպես հղել՝ Նազարյան Լ. *Բագրատունիների Կղարջքի ճյուղի առաջացումը* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2(26): 23-32 էջեր: DOI:

THE ORIGIN OF KGharjk BRANCH OF THE BAGRATUNIS

Liana Nazaryan

Institute of History of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The Tayk-Kgharjk branch of the Bagratunis was founded in the last thirty years of VIII century. It was founded by the son of Armenian prince Ashot Kuir Bagratuni: Vasak, and his son Atrnerseh. During the rule of the latter's son Ashot Curopalates, the Georgian rule of the Bagratunis was established. After that, in the struggle for supreme power, the Tayk-Kgharjk branch of the Bagratunis split into two parts: Tayk and Kgharjk. **Methods and materials:** Historical-comparative, as well as primary sources combination and analysis methods were used in the work. **Analysis:** The reasons and process of the dynasty branch division were studied in the work. After Ashot Curopalates, the power was divided among his sons and grandsons. **Results:** The work presents the participants of the struggle for supreme power and refers to the domains of the heirs of Ashot Curopalates. As a result of their struggle, the Georgian branch of the Bagratunis was divided into two parts: Tayk and Kgharjk. From these, the representatives of the Tayk branch acquired the titles of king and Curopalates, and the ones of Kgharjk - the Eristavi of Eristavis.

Key words: *the Bagratunis, Kgharjk, Tayk, Ashot Curopalates, Atrnerseh, Bagrat, Guaram, Smbat Historian, "Georgian Chronicle."*

Citation: Nazaryan L. *The Origin of Kgharjk Branch of the Bagratunis* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2 (26). pp.23-32. DOI:

ПРОИСХОЖДЕНИЕ КХАРДЖКСКОЙ ВЕТВИ БАГРАТИДОВ

Лиана Назарян

Институт истории НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Тайк-Кхарджкская ветвь Багратидов была основана в последнее тридцатилетие VIII в.. Она была основана сыном армянского князя Ашота Слепого Багратуни Васакком и его сыном Атрнерсехом. При сыне последнего Ашоте Куропалате установилось грузинское правление Багратидов. После этого в борьбе за верховную власть Тайк-Кхарджкская ветвь Багратидов распалась на две части: Тайк и Кхарджк. **Методы и материалы:** В работе использовались историко-сравнительный, а также методы объединения и анализа первоисточников. **Анализ:** В работе исследованы причины и процесс разделения ветвей династии. После Ашота Куропалата власть разделилась между его сыновьями и внуками. **Результаты:** В исследовании представлены участники борьбы за верховную власть и говорится о владениях наследников Ашота Куропалата. В результате их борьбы грузинская ветвь Багратидов разделилась на две части: Тайк и Кхарджк. Представители тайкской ветви получили титулы царей и куропалатов, а кхарджкские - эристав эриставов.

Ключевые слова: *Багратиды, Кхарджк, Тайк, Ашот Куропалат, Атрнерсе, Баграт, Гуарам, историк Смбат, „Летопись Картли“.*

Как цитировать: Назарян Л. *Происхождение Кхарджкской ветви Багратидов* // "Научные труды" ИИЦ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). сс. 23-32. DOI:

ՆԱԽԱԲԱՆ. Բագրատունիների Տայք-Կղարջքի ճյուղը հիմնել են Հայոց իշխան Աշոտ Կույրի (732-748) որդի Վասակն ու վերջինիս որդի Ատրնեքսեհը (VIII դ. վերջին երեսնամյակում): Ատրնեքսեհի դուստր Լատավրիան ամուսնացել է Վրաց Խոսրովյան դինաստիայի վերջին գահակալ Ջուանշերի հետ: Ուստի Ատրնեքսեհը, խնամիանալով վերջինի հետ և ստանալով որոշ տիրույթներ, սկիզբ է դնում նոր իշխանական տոհմի՝ Բագրատունիների վրացական ճյուղի գլխավորությամբ: Այն հիմնադրվել է մինչ Ջուանշերի մահը, այսինքն՝ 787 թ.: Վերջինի մահից հետո իշխանությունն անցել է Ատրնեքսեհի որդի Աշոտ Բագրատունուն, որն էլ Բյուզանդական կայսրից ստացել է կուրապաղատի տիտղոս [4, էջ 77]: Այդ իշխանությունն է, որ վրաց պատմագիտական գրականությունն անվանում է «Տառ-Կլարջեթիի» (Տայք-Կղարջքի) կամ «Քարթվելական թագավորություն», նույնիսկ՝ «Իբերական թագավորություն» [17, էջ 445, 14, էջ 31]:

Աշոտ կուրապաղատի (787-826) իշխանության կազմում էին Տայքը, Կղարջքը և այլ տարածքներ: Ընդ որում, Բագրատունիների իշխանության հաստատման ժամանակաշրջանում, առավել հստակ՝ մինչև Աշոտի որդիների կառավարումը, մեծ էր հատկապես Կղարջքի դերը՝ Արտանուջ կենտրոնով: Դա պայմանավորված էր նրանով, որ Կղարջքը, մինչ Բագրատունիների այնտեղ հաստատվելը, Վրաց Խոսրովյան դինաստիայի կառավարման ընթացքում պատկանում էր Վրաց պետությանը և ազդեցիկ էր այդ ժամանակաշրջանում: Հետևաբար, անցնելով Բագրատունիներին, այն շարունակեց պահպանել իր նշանակությունը: Իսկ Տայքը, որ մինչ VIII դ. երբեք չէր եղել Վրաց պետության կազմում՝ այնտեղ Բագրատունիների իշխանության հաստատման սկզբնական շրջանում չունեի նույն դերը, ինչ Կղարջքը: Սակայն IX դ. երկրորդ կեսից նկատելիորեն մեծանում է նաև Տայքի նշանակությունը, իսկ X դ. կեսերին, երբ Դավիթ կուրապաղատի շնորհիվ Տայքի իշխանությունը հասավ հզորության գագաթնակետին, նրա գերիշխանությունն ընդունում էին նաև Բագրատունիների Կղարջքի ճյուղի ներկայացուցիչները:

Այսպիսով, եթե իշխանության հաստատման ժամանակաշրջանում Բագրատունիների Տայք-Կղարջքի ճյուղը միասնական էր, ապա 826 թ. Աշոտ կուրապաղատի մահից հետո այն տրոհվեց առանձին ճյուղերի՝ Տայքի և Կղարջքի: Ի դեպ, Աշոտ կուրապաղատից հետո նախ նրա իշխանությունը բաժանվեց, ապա նաև՝ Բագրատունիների տոհմը: Ընդ որում, կենտրոնական իշխանության հարցում հաճախ գերապատվությունը տրվել է գլխավորապես Կղարջքին: Սակայն միշտ չէ, որ վերջինիս առաջնորդներն են գերակա եղել Տայքի իշխանների նկատմամբ: Է. Թադաիշվիլին հենց Բագրատունիների Տայքի ճյուղին է վերագրում թագավորի տիտղոս կրելը [16, էջ 51: 19, էջեր 113-114]: Իրականում աղբյուրների տեղեկություններն իսկապես վկայում են Բագրատունիների վրացական ճյուղի բաժանումը Տայքի և Կղարջքի: Այժմ անդրադառնանք այդ խնդրին և պարզենք, թե դա երբ և ինչպես է տեղի ունեցել:

Աշոտ կուրապաղատի իշխանության մասնատումը IX դ. կեսերին

Աշոտ կուրապաղատը, ինչպես վերը նշեցինք, մահացավ 826 թ., իսկ նրա իշխանությունը բաժանվեց երեք որդիների՝ Ատրնեքսեհի, Բագրատի և Գուարամի միջև: Նրանցից միջնակը՝ Բագրատը, ժառանգեց կուրապաղատի տիտղոսը [11, էջեր 98, 105:

18, էջ 63]: Վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատը, որը Աշոտի մահը թվագրում է 826-ով, նշում է, որ դրանից հետո կուրապաղատի ձեռք բերած տիրությունները գրավել են արաբները, քանի որ նրա որդիներն անչափահաս էին, իսկ երբ չափահաս դարձան, վերադարձրին այն ամենը, ինչը պատկանում էր իրենց հորը [18, էջ 63]: Համաձայն Սմբատ պատմիչի՝ մինչև չափահաս դառնալը երեք եղբայրները գտնվում էին Արտանուշում, իսկ Կղարջքը, Շավշթն ու Նիգալը հարկ էին վճարում արաբներին [18, էջ 63]: Վրացական մեկ այլ աղբյուր՝ Գրիգոր Խանձթեցու վարքագիրը, նույնպես վկայում է, որ Աշոտի որդիները գտնվում էին Կղարջքում, բայց նրա տեղեկություններից չի երևում, որ նրանք անչափահաս էին [11, էջեր 98, 105-107 և այլն]: Հավանաբար, Դավթի որդի Սմբատն արաբների կողմից Աշոտի տիրությունների նվաճումը փորձում է բացատրել նրա որդիների մանկահասակ լինելով: Դատելով աղբյուրների վկայությունից՝ Աշոտի որդիներին է մնացել իշխանության կենտրոնական հատվածը, ինչպես նաև Տայքի հյուսիսային (առանց Կող գավառի) և հյուսիսարևմտյան տարածքները, իսկ արաբները տիրել էին բուն Վիրքին և շրջակա տարածքներին՝ մինչև Քսան գետը:

Աշոտ կուրապաղատի միջնեկ որդի Բագրատը, բյուզանդական կայսեր համաձայնությամբ (հավանաբար խոսքը Ֆեոֆիլ (829-842) կայսեր մասին է) ժառանգել էր կուրապաղատի տիտղոսը [11, էջ 105]: Իսկ «Վրաց Տարեգրք»-ի հաղորդմամբ, երբ Խալիդի որդի Մուհամմեդը (Մուհամմադ իբն Խալիդ) եկավ Քարթլի (Վիրք), Բագրատը գնաց նրա մոտ և նրանից ստացավ Քարթլին [13, էջ 49: 12, էջ 141]: Մուհամմադ իբն Խալիդը (845-849) Հայաստան ու Վիրք եկել է հոր մահից հետո: Նրան ուղարկել էր Վասիկ խալիֆը (842-847) [7, էջ 395], ուստի Բագրատը նրա մոտ պետք է գնացած և Քարթլին ստացած լինե՞ր 845-847 թթ. միջակայքում: Բանն այն է, որ, ինչպես վկայում է աղբյուրը, Բագրատը Վիրքին տիրել է Մուհամմադի հայր Խալիդ իբն Յազիդի երրորդ անգամ այնտեղ գնալուց և սպանվելուց հետո, իսկ վերջինիս որդի Մուհամմադ իբն Խալիդ իբն Յազիդը հոր մահից (845 թ.) հետո է գնացել Վիրք և այն տվել Բագրատին [13, էջ 49: 12, էջ 141]: Արքայազն Վախուշտը նշում է, որ Բագրատը տիրեց Քարթլին (Վիրք), ինչպես նաև Վերին Քարթլին կամ Սամցխեին [10, էջ 187]: Այսպիսով, Աշոտ կուրապաղատի որդիներից Բագրատը հոր իշխանության տարածքներից տիրեց Քարթլին (Վիրքը) և Սամցխեին:

«Վրաց Տարեգրք»-ի համաձայն՝ Աշոտ կուրապաղատի կրտսեր որդի Գուարամը գրավեց Ջավախքը, Թրիալեթը (Թռեղքը), Տաշիրը, Աբոցը (Աշոցքը) և Արտահանը [13 էջ 50: 12, էջ 142]: Հավանաբար, նա այդ տարածքները գրավել էր արաբներից, քանզի աղբյուրը հաջորդիվ նշում է, որ նա պայքարել է արաբների դեմ, երբեմն հաղթել, երբեմն էլ՝ պարտվել [13, էջ 50: 12, էջ 142]: Ինչպես վերը նշվեց, նրա հոր տիրությունների մի մասն ընկել էր արաբների տիրապետության տակ, ուստի պարզ է, որ Գուարամը նրանցից պետք է գրավեր այդ տարածքները: Նույն աղբյուրը նաև վկայում է, որ «Գուարամն իր տիրությունները կիսում է եղբայրների՝ Ատրներսեհի և Բագրատի հետ, իսկ Աբոցը (Աշոցքը) տվել էր աներորդուն՝ Հայոց թագավորին» [13, էջ 50: 12, էջ 142]: Ըստ Վախուշտի «Գուարամ մամփալը տիրեց Ջավախքին, Թրիալեթին (Թռեղքը), Աբոցին (Աշոցքը) և որոշ մասերի Սոմխիթից (Հայաստանից), քանի որ Գուարամ մամփալն ամուսնացած

էր Հայոց թագավորի դստեր հետ» [10, էջ 187]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ Գուարամը մահացել է 882 թ. [15, էջ 36], այդ ժամանակաշրջանում «Հայոց արքա» ասելով պետք է հասկանալ Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն, որը դեռևս թագավոր չէր հռչակվել: Ինչ վերաբերում է եղբայրների հետ տիրույթները կիսելուն, ապա կարծում ենք՝ խոսքն այստեղ ոչ թե Գուարամի տիրույթների, այլ իրենց հոր իշխանությունը բաժանելու մասին է: Հակառակ պարագայում կստացվի, որ Գուարամի հիշյալ տարածքներն են բաժանվել եղբայրների միջև: Եվ քանի որ նրանցից Բագրատը մահացել էր 876 թ. [19, էջ 115: 15, էջ 33: հմմտ. 12, էջ 225: 18, էջ 64: 10, 265]¹, հետևաբար, այդ տարածքները մինչ այդ պետք է տրված լինեին եղբայրներին:

Իսկ ի՞նչ եղավ Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրներսեհը: «Վրաց Տարեգիրք»-ը նրա մասին լռում է, իսկ Վախուշտի Բագրատիոնը վկայում է, որ նա տիրում էր Կղարջքին [10, էջ 187]: Դրա վկայությունն է նաև Դավթի որդի Սմբատի երկում նրա սերունդներին «Արտանուջելի» (Արտանուջեցի) կոչելը [18, էջեր 65, 67-68: 15, էջեր 35-36, 38]: Կարծում ենք, որ թեև աղբյուրներում Ատրներսեհի տիրույթ է նշվում լոկ Կղարջքը, սակայն նրա տիրույթները միայն այդ երկրամասով չեն սահմանափակվել:

Ինչպես վերը նշվել է, Աշոտ կուրապաղատից հետո նրա որդիները, կորցնելով արտաքին տարածքները, հաստատվել էին իրենց բուն տիրույթներում՝ Կղարջքում, Շավշքում ու Նիգալում: Սակայն աղբյուրները վերջին երկուսը չեն հիշում եղբայրներից և ոչ մեկի տիրույթներում: Քանի որ այդ տարածքները սահմանակից էին Կղարջքին, հետևաբար, ենթադրելի է, որ դրանք նույնպես մնացել էին Ատրներսեհի տիրապետության տակ: Այսինքն՝ եղբայրներից Բագրատն ու Գուարամը, դուրս գալով իրենց բուն տիրույթներից, ձեռք էին բերել իրենց հիշյալ տարածքները, իսկ ավագ եղբայրը մնացել էր Կղարջքում, որի կենտրոնը շարունակում էր մնալ Արտանուջը: Իսկ Ատրներսեհին պատկանող Կղարջքը սահմանակից էր Տայքի հյուսիսային հատվածին կամ Ստորին Տայքին ու Արսեացփորին: Ուստի տրամաբանական է, որ Տայքի հյուսիսային ու արևմտյան մասերը նույնպես մտել են Ատրներսեհի տիրապետության տակ, այդ իսկ պատճառով այն ևս բացակայում էր մյուս եղբայրների տիրույթներից:

Այսպիսով, Աշոտ կուրապաղատից հետո նրա իշխանությունը բաժանվեց երեք մասի: Ի դեպ, ինչպես տեսանք, Տայքը և Կղարջքը միասին պատկանում էր եղբայրներից ավագին՝ Ատրներսեհին: Սակայն Բագրատունիների տոհմը մասնատվեց հենց Տայքի ու Կղարջքի ճյուղերի: Հետևաբար, հարց է ծագում՝ ի՞նչ եղան մյուս եղբայրների տիրույթները:

Բագրատունիների տոհմի բաժանումը Տայքի և Կղարջքի ճյուղերի

Բագրատունիների վրացական ճյուղի բաժանման և Աշոտ կուրապաղատի որդիների տիրույթների ճակատագիրը պարզելու համար անհրաժեշտ է ծանոթանալ երեք եղբայրների սերունդներին: Նրանց մասին մանրամասն ներկայացված է Դավթի որդի

¹ Դավթի որդի Սմբատի երկի ռուսերեն թարգմանությունում, ինչպես նաև «Քարթլիս Ցխտվրեբայի» ռուսերեն 2008 թ. հրատարակությունում վրիպակ է սպրդել, և Բագրատի մահը նշված է քրոնիկոն 101 թ. (881 թ.), սակայն Սմբատի երկի վրացերեն և ռուսերեն է. Թաղախիշվիլու հրատարակություններում նշված է քրոնիկոն 96 թ. (876 թ.), Մ. Բրոսսեն նույնպես նշում է 876 թ.:

Սմբատի երկում, նրա հետևությամբ՝ նաև Վախուշտի աշխատությունում, որտեղ, սակայն, առկա են որոշ անհամապատասխանություններ: Սմբատ պատմիչը նաև նշում է նրանց մահվան թվականները:

Համաձայն պատմիչի՝ ավագ եղբայր Ատրներսեհն² ուներ երեք որդի՝ Գուրգեն, որին խոր ծերության հասակում դարձրին կուրապաղատ, Աշոտ Կեկելյալ և Սմբատ Արտանուշեցի, որին նշանակեցին անտիպատոս-պատրիկոս [18, էջ 63: 15, էջ 32: հմմտ. 10, էջ 188]:

Եղբայրներից միջնեկը՝ Բագրատ կուրապաղատը, նույնպես ուներ երեք որդի՝ Դավիթ, որը հոր մահից հետո (876 թ.) դարձավ կուրապաղատ, այսինքն՝ ժառանգեց այդ տիտղոսը, Ատրներսեհ և Աշոտ [18, էջ 63: 15, էջ 32: հմմտ. 10, էջ 189]:

Աշոտ կուրապաղատի կրտսեր որդին՝ Գուարամ մամփալը, ուներ երկու որդի՝ Նասր ու Աշոտ և դուստր, որն ամուսնացած էր Ափխազաց թագավորի որդի Ատրներսեհի հետ [18, էջ 63: 15, էջ 32: հմմտ. 10, էջ 187]:

IX դ. երկրորդ կեսից Աշոտ կուրապաղատի որդիների ու թոռների միջև պայքար է ծավալվում գերագույն իշխանության և, հատկապես, Քարթլին (Վիրքին) տիրելու համար: Այդ պայքարին շուտով միջամտում է նաև Ափխազական թագավորությունը, որը նույնպես ցանկանում էր տիրել Քարթլին (Վիրքին), իսկ ավելի ուշ՝ նաև Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին (ապագա թագավոր Աշոտ Ա (885-890)): Բագրատունիների վրացական ճյուղի ներսում գերագույն իշխանությունը պատկանում էր նրան, ով կրում էր կուրապաղատի տիտղոս: Հետևաբար, Աշոտ կուրապաղատի սերունդները պայքարում էին կուրապաղատի տիտղոսի համար, որը նրա մահից հետո անցել էր միջնեկ որդի Բագրատին ու սրանից հետո՝ սրա որդի Դավթին: Ուստի այդ տիտղոսի համար IX դ. երկրորդ կեսից պայքարում էին Աշոտ կուրապաղատի թոռները՝ Գուրգենը, Դավիթը և Նասրը: Սրանք երեք եղբայրների՝ Ատրներսեհի, Բագրատի ու Գուարամի որդիներն էին: Բագրատը և Ատրներսեհը՝ Գուրգենի հայրը, մահացել էին, իսկ կրտսեր եղբայր Գուարամը, ամենայն հավանականությամբ, ցանկանում էր տիրել ոչ միայն իր հորը պատկանած տարածքներին (դրանց մի մասը անցել էր Լիպարիտ Բաղվաշին), այլև ձեռք բերել գերիշխանություն, որը, ինչպես նշվեց, տվյալ պարագայում համարվում էր կուրապաղատի տիտղոս կրելը: Հենց այդ նպատակն էր հետապնդում նաև Գուրգենը:

Պայքարն ընթանում է երեք փուլով, որի արդյունքում նախ Գուարամի որդի Նասրի կողմից սպանվում է Դավիթ կուրապաղատը (876-881) [13, էջ 51: 18, էջ 64: 10, էջ 187, 189]: Շուտով Գուարամը դառնում է հոգևորական և հետո մահանում (882 թ.) [18, էջ 64]: Սակայն Դավիթ կուրապաղատի սպանությունը Նասրի համար չծառայեց իր նպատակին, բացի այդ, չմնաց անպատասխան: «Վրաց Տարեգիրք»-ը վկայում է, որ շուտով Նասրի դեմ համախմբվեցին «հայերը, Լիպարիտն ու վրացիները և Աշոտը՝ Դավթի եղբայրը, ինչպես նաև նրանց հետ՝ սարակինոսները [արաբները-Լ.Ն.]» [13, էջ 51: 12, էջ 142]: Նրանք պարտության են մատնում Նասրին և զավթում նրան պատկանող ամրոց-

² Ղ. Ալիշանը Բագրատունիների տոհմաճառում Ատրներսեհի մահը թվագրում է 860-ով և նրան կոչում «տեր Արտանուշի» (մանրամասն տե՛ս Ալիշան Ղ., Շիրակ, Տոհմացոյց Բագրատունեաց):

ները: Նասրը փախչում է Բյուզանդիա [13, էջ 51: 12, էջ 142: հմմտ. 18, էջ 64]: Համաձայն Սմբատ պատմիչի՝ նրա դաշնակից Գուրգենն էլ ստացավ կուրապաղատի տիտղոս [18, էջ 64: 15, էջ 33]: Այսինքն՝ Նասրի կողմից Դավիթ կուրապաղատի սպանությամբ վերջինիս տիտղոսն անցնում է Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրնեքսեհի տղա Գուրգենին: Փաստորեն, վերջինս այդ հակամարտությունում հասավ իր նպատակին:

Այսպիսով, Բագրատունիների վրացական ճյուղի ներսում գերիշխանությունն անցավ Տայքին ու Կղարջքին տիրող Գուրգենին: Իսկ Դավիթ կուրապաղատին պատկանած տիրույթներն, ըստ ուսումնասիրողների, ընկել են Հայոց իշխանաց իշխան Աշոտի տիրապետության տակ [19, էջ 101-102: 9, էջ 125]:

Նասրը, վերադառնալով Կոստանդնուպոլսից, փորձում է վերականգնել իր դիրքերը, սակայն այս անգամ նրա հորեղբորորդի Գուրգենը միանում է սպանված Դավիթ կուրապաղատի որդի Ատրնեքսեհին: Հայերի օգնությամբ նրանք պարտության են մատնում Նասրին, որն էլ սպանվում է 888 թ. [18, էջ 64: 13, էջ 51: 10, էջ 188]: Ըստ Զ. Անչաբաձեի՝ Նասրի տիրույթներն անցել են Դավիթ կուրապաղատի ժառանգին [9, էջ 125], այսինքն՝ Ատրնեքսեհին: Բյուզանդիայից վերադառնալուց հետո Նասրը Սամցխեում գրավել էր երեք բերդ՝ Օձրխեն, Ջվարիսցիխեն և Լոմսիանթան [13, էջ 51: 12, էջ 143], և նրա մահից հետո, հավանաբար, այդ բերդերն են անցել այլ իշխանների:

Նասրի մահով ընդհատվեց նաև Աշոտ կուրապաղատի կրտսեր որդու սերունդը: Նասրը որդի չունեւ, իսկ նրա եղբայր Աշոտն առավել վաղ էր մահացել՝ դարձյալ անժառանգ [18, էջ 64: 15, էջ 33]:

Սակայն, շուտով թշնամանում են նաև Գուրգենն ու Ատրնեքսեհը: Վերջինիս, ինչպես վկայում է Սմբատ պատմիչը, հռչակում են վրաց թագավոր: Սմբատ պատմիչի տեղեկություններից պարզվում է, որ «Գուրգեն կուրապաղատն իր տիրույթ Տայքից ու Կալմախից տեղափոխվեց Շավշեթ և Արտահան: Իսկ դրանից հետո սկսեցին միմյանց դեմ զորք հավաքել և պայքարել իրար դեմ մի կողմից՝ Գուրգեն կուրապաղատն ու իր մարդիկ, մյուս կողմից՝ Վրաց թագավոր Ատրնեքսեհն ու Բագրատ Արտանուջեցին» [18, էջ 65: 15, էջ 34]: Վերջինս Գուրգենի եղբայր Սմբատ Արտանուջեցու որդին էր: Այդ պայքարի ընթացքում 891 թ. Գուրգեն կուրապաղատը մահանում է [18, էջ 65: 15, էջ 34]:

Դավթի որդի Սմբատի սույն տեղեկությունները լույս են սփռում մի շարք հարցերի վրա: Վերջնականապես հաստատվում է այն տեսակետը, որ Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրնեքսեհը տիրել էր ոչ միայն Կղարջքին, այլև Շավշեթին, Արտահանին և Տայքի որոշ հատվածներին: Նրա որդիներ Գուրգենը, Աշոտ Կեկելայը և Սմբատ Արտանուջեցին միմյանց միջև բաժանել էին իրենց հոր տիրույթները: Դատելով «Արտանուջեցի» անվանակոչումից՝ Սմբատը ստացել էր Կղարջքը՝ Արտանուջ կենտրոնով, Շավշեթն ու Արտահանը, հավանաբար, բաժին էին հասել Աշոտ Կեկելային, որի մասին տեղեկություններ է հայտնում նաև Կոստանդին Ծիրանաձինը, իսկ Տայքի տարածքները, փաստորեն, անցել էին Գուրգենի տիրապետության տակ: Սակայն վերջինս էլ դրանք զիջել է իր հորեղբոր թոռանը՝ Ատրնեքսեհ I թագավորին:

Ի տարբերություն վրացական աղբյուրների, հայկական և բյուզանդական աղբյուրներում Ատրնեքսեհը կոչվում է նաև կուրապաղատ [3, էջ 14: 2, էջ 237]: Հովհաննես

Դրասխանակերտցին մինչ Ատրնեքսեհի թագավոր հռչակվելը նրան կոչում է «մեծ իշխանն Վրաց» (Հայոց արքա Աշոտ Ա-ի մահվան կապակցությամբ ցավակցություն հայտնելիս), ապա նաև՝ «մեծ կուրապաղատն Վրաց» [5, էջեր 144, 161, 184]: Իսկ Կոստանդին Ծիրանածինը հայտնում է, որ Ատրնեքսեհին կուրապաղատի տիտղոս է շնորհել Լևոն VI Իմաստասեր կայսրը (886-912) [3, էջ 14]: Սմբատ պատմիչը Գուրգեն կուրապաղատից հետո այդ տիտղոսով է կոչում Ատրնեքսեհ I-ի որդի Աշոտին, որը մահացել է 954 թ.: Հետևաբար կարելի է ենթադրել, որ Գուրգենի տիրույթներից բացի, նրա մահից հետո Ատրնեքսեհը ստացել է նաև կուրապաղատի տիտղոս, որը փոխանցվել է իր սերնդին, իսկ Գուրգենի որդիներին ու թոռներին, որոնք իշխում էին Կղարջքում, Շավշքում և Արտահանում, այդուհետ կոչում են Էրիսթավների Էրիսթավ [18, էջեր 64-65: 15, էջ 34]:

Այդպիսով, գերագույն իշխանության համար պայքարն ավարտվեց Բագրատունիների վրացական ճյուղի տրոհումով Տայքի ու Կղարջքի, որի հիմքը կուրապաղատ տիտղոսի կրելն էր, որը ժառանգաբար փոխանցվում է Ատրնեքսեհի որդիներին: Իսկ Կղարջքի ճյուղը վասալական կախվածության մեջ է ընկնում Տայքի ճյուղի ներկայացուցիչներից: Վերջիններս էլ վասալական կախվածություն ունեին Հայոց թագավորներից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Բագրատունիների վրացական ճյուղը հիմնել են Վասակ և Ատրնեքսեհ Բագրատունիները VIII դ. վերջին երեսնամյակում: Այն հզորացավ Ատրնեքսեհի որդի Աշոտ կուրապաղատի օրոք: Վերջինի իշխանությունն ընդգրկում էր Կղարջքից ու Տայքի հյուսիսային և հյուսիսարևմտյան տարածքներից մինչև Քսան գետը արևելքում՝ ներառելով նաև Վիրքը: Սակայն Աշոտի մահից հետո նրա իշխանությունը մասնատվեց երեք մասի, իսկ IX դ. վերջին նաև Բագրատունիների վրացական ճյուղը բաժանվեց Տայքի ու Կղարջքի ճյուղերի: Սրանցից առաջինը վաստակեց նաև գերագույն իշխանությունը՝ կուրապաղատի ու թագավորի տիտղոսները, որոնք ժառանգաբար փոխանցվեցին Տայքի ճյուղի ներկայացուցիչներին: Իսկ Կղարջքի ճյուղի Բագրատունիները, որոնց հիմնադիրը Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրնեքսեհի սերունդներն էին, IX-X դդ. կրում էին միայն Էրիսթավների Էրիսթավ և մագիստրոս ու բյուզանդական այլ տիտղոսներ: Նրանք վասալական կախվածություն ունեին Տայքի Բագրատունիների նկատմամբ:

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Ալիշան Ղ. *Շիրակ, տեղագրություն պատկերացոյց*: Ս. Ղազար տպ.: Վենետիկ: 1881: 7+192 էջ+2 քարտեզ+1 ներդիր:
2. Թեոփանեսի Շարունակող: *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*: 15: *Բյուզանդական աղբյուրներ*: Ե: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի: Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1990: XLV+439 էջ:
3. Կոստանդին Ծիրանածին: *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*: 6: *Բյուզանդական աղբյուրներ*: Բ: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1970: LXV+ 370 էջ+2 քարտեզ:

4. Հախարումն պատմության Վարդանայ վարդապետի: Լուսարանալ ի Սուրբ Ղազար: Վենետիկ: 1862: ԺԱ+184 էջ:
5. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ պատմութիւն Հայոց: Էլեքտրատպ. օր. Ն. Աղանեանցի: Թիֆլիս: 1912: ԺԹ+427 էջ:
6. Ստեփանոսի Տարոնեցոյ Ատոկան Պատմութիւն տիեզերական: Ի տպարանի Ի.Ն. Սկորոխտովի: Ս. Պետերբուրգ: 1885: ԽԸ+439 էջ:
7. Տեր-Ղևոնդյան Ա. Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, //Հոդվածների ժողովածու: Երևան: 2003: 385-396 էջեր:
8. Brosset M. *Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle*. 1^{re} partie. Imprimerie de L'Académie Impériale des Sciences. S.-Petersbourg. 1849. 694 p..
9. Анчабадзе З. *Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.)* Абхазкое гос. изд..Сухуми.1959.306 с.
10. Вахушти Багратиони. *История царства Грузинского*. Перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Накашидзе. изд. „Мецниереба“. Тбилиси. 1976. 340 с..
11. Георгий Мерчул. *Житие Григория Хандзтийского*. Перевод Н. Я. Марра, с дневником поездки в Шавшетию и Кларджетию“. СПб.. 1911.- LXX+151+216 с..
12. Картлис Цховреба. *История Грузии*. главный редактор Р. Метревели. изд. „Артануджи“. Тбилиси. 2008. 455 с.+4 карта+15 картин.
13. *Летопись Картли*. перевод, введение и примечания Г. Цулая. Памятники грузинской исторической литературы. IV. изд. „Мецниереба“. Тбилиси. 1982. 113 с..
14. Лордкипанидзе М. *Из истории грузино-византийских взаимоотношений на грании X-XI вв.* //საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის საკითხები. II. თბილისი. 1972. 31-42 ს..
15. Сумбат Давитис-дзе. *История и повествование о Багратионах*. Перевод, введение и примечания М. Лордкипанидзе. Памятники грузинской исторической литературы. III. изд. „Мецниереба“. Тбилиси. 1979. 69 с..
16. *ექვთიმე თაყაიშვილის არქივი*. საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემია კ. კეკელიძის სახელობის ხელნაწერთა ინსტიტუტი. აკადემიკოს ექვთიმე თაყაიშვილის არქივი № ფონდი 663, № ფონდი 51. ათქიუსას I, ათქიუსას II.
17. *საქართველოს ისტორიის ნარკვევები*. ტ. II. გამომცემლობა „საბჭოთა საქართველო“. თბილისი. 1973. 672 გვ..
18. სუმბატ დავითის ძის ქრონიკა. *ტაო-კლარჯეთის ბაგრატიონთა შესახებ*. გამოცემა მესამე, ტექსტი გამოსცა ვრცელი შესავლით, შენიშვნებით და ორი გენეალოგიური ტაბულით საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის ნამდვილმა წევრმა ე. თაყაიშვილმა. საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის გამომცემლობა. თბილისი. 1949. 95 გვ..
19. ჯავახიშვილი ივ. *ქართველი ერის ისტორია*. წიგნი მეორე. გამომცემლობა „საბჭოთა საქართველო“. თბილისი. 1965. 472 გვ.+7 ტაბული.

References

1. Alishan Gh. Shirak, topography of imagination [Shirak, teghagrutyun patkeracoyc]. S. Lazar print.: Venice. 1881. 7+192 p. (in Armenian)
2. Continuator of Theophanes [Theophanesi Sharunakox]. *Foreign sources about Armenia and Armenians*. 15. Byzantine sources. E. Translation from the original, preface and notes by H. Bartikyan. Armenian SSR GA ed. Yerevan. 1990. XLV+439 p. (in Armenian)
3. Constantine Porphyrogenetes [Konstantin Tsiranatsin]. *Foreign sources about Armenia and Armenians*. 6. Byzantine sources. B. Translation from the original, preface and notes by H. Bartikyan. Armenian SSR GA ed. Yerevan. 1970: LXV+ 370 p. (in Armenian)
4. The collection of the history of Vardan vardapet [Havaqumn patmutyan Vardana Vardapeti]. S. Lazar print.: Venice. 1862: JA+184 p. (in Armenian)

5. Ioannes Draschanacerenis Historia Armeniae [Yohannu katolikosi Drasghanakertecvo patmutyun Hajoc]. N. Aghanians. Tiflis. 1912: JT+427 p. (in Armenian)
6. The Universal History of Step'anos Tarōnec'I Asoghik [Stefanosi Taronecvoy Asoghkan Patmutyun Tiezerakan], In the printing house I.N. Skorokhodov. S. Petersburg. 1885. KGH+439 p. (in Armenian)
7. Ter-Ghevondian A. *The chronology of the Vostikan of Armenia* [Armeniyai vostikanneri jamanakacuycy], //Collected Articles. Yerevan. 2003. 385-396 p. (in Armenian)
8. Brosset M. *Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle*. 1^{re} partie. Imprimerie de L'Académie Impériale des Sciences. S.-Petersbourg. 1849. 694 p..
9. Anchabadze Z. From the history of medieval Abkhazia (VI-XVII centuries) [Iz istorii Srednevekovoy Abghazii (VI-XVII vv.)]. Abkhaz state. ed.. Sukhumi. 1959. 306 p. (in Russian)
10. Vakhushti Bagrationi. History of the Kingdom of Georgia [Istoria Carstvo Gruzinskogo]. Translated, supplied with a preface, dictionaries and an index by N. Nakashidze. ed. „Metsniereba". Tbilisi. 1976. 340 p. (in Russian)
11. Georgi Merchule. Life of Gregory of Khandzta [Zhitie Grigoriya Handztijskogo]. Translated by N. Marr. With a diary of a trip to Shavshia and Klardzhia. St. Petersburg. 1911.- LXX+151+216 p. (in Russian)
12. Kartlis Tskhovreba. History of Georgia [Istoria Gruzii] . chief editor R. Metreveli. ed. „Artanuji". Tbilisi. 2008. 4 map+15 poto+455 p. (in Russian)
13. Chronicle of Kartli [Letopis Kartli]. Translation, introduction and notes by G. Tsulai. Monuments of Georgian historical literature. IV. ed. „Metsniereba". Tbilisi. 1982. 113 p. (in Russian)
14. Lordkipanidze M. From the history of Georgian-Byzantine relations on the verge of X-XI centuries [Iz isttorii gruzino-vizantiskikh vzaimootnoshenii na granii X-XI vv.] //issues of the history of the feudal age of Georgia. II. Tbilisi. 1972. 31-42 p. (in Russian)
15. Sumbat Davitis-dze. History and narrative about the Bagrations [Istoria I povestvovanie o Bagrationakh]. Translation, introduction and notes by M. Lordkipanidze. Monuments of Georgian historical literature. III. ed. „Metsniereba". Tbilisi. 1979. 69 p. (in Russian)
16. Archive of Ekvtime Takaishvili [Ekvtime Takaishvilis arkhivi]. Academy of Sciences of the USSR of Georgia Institute of Manuscripts named after Kekelidze K.. Archive of Academician Ekvtime Takaishvili Fond N 663, Fond N 51. table I, table II. (in Georgian)
17. Essays on the history of Georgia [Sakartvelos istorii narkvevebi]. t. II. "Soviet Georgia" publishing house. Tbilisi. 1973. 672 p. (in Georgian)
18. Chronicle of Sumbat David's son. About the Bagrations of Tao-Klarjeti [Tao-Klarjetis Bagrationta shesakheb]. The third edition, the text with an extensive introduction, notes and two genealogical tables was published by E. Takaishvili. Publishing House of the Academy of Sciences of the USSR of Georgia. Tbilisi. 1949. 95 p. (in Georgian)
19. Javakhishvili Iv. The history of the Georgian nation [Kartveli eris istoria]. Book two. "Soviet Georgia" publishing house. Tbilisi. 1965. 472 p. (in Georgian)

Ընդունվել է / Принята / Received on: 20.80.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 08.09.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27 .11.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիանա ՆԱԶԱՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ԳԱԱ ՊԻ միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. huugէ՝ Lian_nazaryan@mail.ru <http://orcid.org/0000-0002-5576-2710>

Liana NAZARYAN: PhD in History, Researcher at the Department
of Medieval History of the Institute of History NAS, Yerevan, RA,
e-mail: Lian_nazaryan@mail.ru <http://orcid.org/0000-0002-5576-2710>

Лiana НАЗАРЯН: кандидат исторических наук, научный
сотрудник отдела истории средних веков ИИ НАН, Ереван, РА
эл.адрес: Lian_nazaryan@mail.ru [http:// orcid.org/0000-0002-5576-2710](http://orcid.org/0000-0002-5576-2710)